Կարգապահական գործ թիվ ԿԳ-17104

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017 թվականի դեկտեմբերի 05-ի թիվ 179-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/107-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՍԱՄՎԵԼ ԱՐՏՈՒՇԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ նաև՝ Պալատ)** խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյանի, Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Տարոն Սիմոնյանի

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին (արտոնագիր թիվ 939) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի առաջին տեղակալին 07.09.2017թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանն ունի 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2017թ. հունիսից հուլիս (ներառյալ) ամիսների համար: Համաձայն տեղեկանքի փաստաբանի անդամավճարի ընդհանուր պարտքը կազմում է 275.000 (երկու հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամհաշվարկված 2013թ. հունվարից մինչև 2017թ. հուլիս (ներառյալ) ամիսների համար:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

07.09.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալի թիվ 278-Ա/ԿԳ-17104 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ՝ Կանոնագիրք)** 2.9.1 ենթակետի խախտման հատկանիշներով:

11.09.2017թ-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդի անդամ Մելանյա Առուստամյանին (նիստը նախագահող):

11.09.2017թ-ին գործը ընդունվել է վարույթ և նիստի օր է նշանակվել 05.12.2017թ-ին, ժամը 18:27-ին:

3. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Պալատում առկա փաստաբանների ցուցակում և փաստաբանի անձնական գործում փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանի որևէ հեռախոսահամար և/կամ էլեկտրոնային փոստի հասցե առկա չէ: Փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին փոստային ծառայության միջոցով ուղարկվել է նիստի մասին ծանուցագիր «ք. Երևան, Սարկավագի, 54/4, բն.13» հասցեով, սակայն փոստային ծրարը վերջինիս կողմից չի ստացվել: Պալատի աշխատակազմը փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին խորհրդի նիստի և ժամանակի մասին ծանուցել է հրապարակային կարգով՝ նիստի ծանուցումը Հայաստանի Հանրապետություն օրաթերթի 02.12.2017թ. թիվ 216 (6737) համարում հրապարակելու միջոցով:

4. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 24.10.2009թ. (փաստը հաստատվում է Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 05.12.2017թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանը ունի 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2017թ. հունիսից հուլիս (ներառյալ) ամիսների համար (փաստը հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 07.09.2017թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի առաջին տեղակալին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանը իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 05.12.2017թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից 05.12.2017թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Սամվել Արտուշի Սարգսյանի (արտոնագիր 939, ստացված՝ 24.10.2009թ.) նկատմամբ 2009-2017թթ. ընկած ժամանակահատվածում 11 անգամ (10 ավարտված վարույթներ և 1 ընթացիկ) հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով, որոնցից մեկը Պալատի Խորհրդի 29.10.2012թ. թիվ 18ԿԳ որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն): 21.05.2013թ. թիվ 22ԿԳ-1 և 13.06.2014թ. թիվ 111ԿԳ-1 որոշումներով անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Սամվել Արտուշի Սարգսյանն ենթարկվել է պատասխանատվության նկատողության, իսկ 24.10.2014թ. թիվ 171/1, 25.03.2015թ. թիվ ԿԳ/45-Ա և 25.03.2015թ. թիվ ԿԳ/46-Ա որոշումներով խիստ նկատողության ձևով: 06.10.2015թ-ին թիվ ԿԳ/140-Ա որոշմամբ անդամավճար վճարելու պարտականությունը չկատարելու համար Սամվել Արտուշի Սարգսյանն ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով՝ 15.000 ՀՀ դրամ չափով, 16.01.2017թ. թիվ ԿԳ/13-Ա որոշմամբ ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով՝ 20.000 ՀՀ դրամ չափով, իսկ 04.04.2017թ. թիվ ԿԳ/37-Ա որոշմամբ ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով՝ 25.000 ՀՀ դրամ չափով, 22.08.2017թ. թիվ ԿԳ/77-Ա որոշմամբ ենթարկվել է պատասխանատվության տուգանքի ձևով՝ 30.000 ՀՀ դրամ չափով:

6. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար*: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:*

Համաձայն Կանոնագրքի 2.9.1. կետի՝ *Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:*

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ *Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը,* իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ *Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու*

համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:

Վերոնշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից տրամադրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ նա շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր: Խորհուրդը կարգապահական տույժ նշանակելիս հաշվի է առնում նաև, որ սույն որոշումը կայացնելու դրությամբ փաստաբանը նախկինում նմանատիպ խախտման համար ենթարկվել է կարգապահական տույժի:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ***Փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին (արտոնագիր թիվ 939) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 4-րդ մասի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.9.1. ենթակետի պահանջների խախտման համար:***
2. ***Փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանի (արտոնագիր թիվ 939) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ տուգանք 35.000 ՀՀ դրամի չափով:***
3. ***Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Սամվել Արտուշի Սարգսյանին:***

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ Մելանյա Առուստամյան